ՀԱՍՏԱՏՈՒՄԵՄ

Տնօրեն՝ _____/Մ.Ավետիսյան

« 10» սեպտեմբեր 2023թ.

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի N1 միջնակարգ դպրոցի

Ի դասարան

Սամվելյան Արմինե Լյովայի

2023-2024 ուսումնական

Կրթականդաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Ի Բ դասարանում սովորում են 20աշակերտ, որոնցից 11-ը տղա են, 9-ը՝ աղջիկ: Բոլոր աշակերտները ուշադիր են, ցանկանում են սովորել, ձգտում են հաստատված կարգ ու կանոնի, սիրով են հաճախում դպրոց: Աստիճանաբար սկսում են իրար ճանաչել , շփվել և խաղալ: Յուրաքանչյուր աշակերտ զգում է դպրոցի անհրաժեշտությունն իր կյանքում: Խաղը կապվում է նոր ձեռք բերվող գիտելիքների հետ և մեծ հետաքրքրություն է առաջացնում:

2. Ուս. տարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ա. Աշխատանքները նպատակաուղղել ունակ և պատասխանատու աշակերտներ դաստիարակելուն:

բ. Նպաստել աշակերտների ինքնաճանաչմանը, խթանել ինքնաարտահայտումը:

գ. Ստեղծել բարենպաստ դաշտ հակասությունները ու բախումները կարգավորելու, փոխըմբռնման և համագործակցության ճանապարհներ որոնելու համար:

դ. Նպաստել հանդուրժողականության ձևավորմանը:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 - Հոգևոր դաստիարակություն

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Ծանոթացնել մի քանի քրիստոնեական ծիսակատարությունների և տոների հետ:

3.2 – Գեղագիտական դաստիարակություն

Նպաստել երեխաների մոտ գեղագիտական ճաշակի զարգացմանը: Կարևորել մարդ- բնություն փոխհարաբերությունը, արժևորել գեղեցիկի սեփական ընկալումը: Կյանքից օրինակներ բերել և ձևավորել գեղագիտական ճաշակ: Պատի թերթերը և դասարանը ձևավորել աշակերտների միջոցով:

3.3 – Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Դաստիարակությունը նպատակաուղղել հայրենիքի համար հայրենասեր, քաջ, բարոյական անհատի ձևավորմանը: Հայրենասիրությունը , հայրենապաշտությունը դարձնել մարդկային որակ: Ուսուցանել հայրենասիրական երգեր:

3.4 – Ֆիզիկական դաստիարակություն

Առաջին և ամենագլխավոր ուղղությունը համարվում է աշակերտի ֆիզիկական առողջության պահպանումը: Առողջ մարմին առողջ հոգի գաղափարը դարձնել գործելակերպ: Հետևել աշակերտների մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին: Ինչպես նաև կազմակերպել ակտիվ միջոցառումներ՝ մրցույթներ, էքսկուրսիաներ, արշավներ: Հետևել, որ աշակերտները ընդգրկվեն սպորտի որևէ բնագավառում:

3.5 – Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ որպես անձի համակողմանի դաստիարակություն զարգացնելու համար կարևոր է նաև աշխատանքային դաստիարակությունը, որը կապ է ստեղծում մտավոր դաստիարակության հետ: Աշակերտների մոտ սերմանել սեր աշխատանքի նկատմամբ: <<Աշխատանքն է ամեն տեսակի բարեկեցության աղբյուրը>>, << Գործն է անմահ >> կարգախոսները դարձնել կենսակերպ: Հաղորդակից դարձնել լավ մարդկանց աշխատանքներին և սովորեցնել միշտ հարգել ուրիշի աշպատանքը: Կազմակերպել ցուցահանդես դասարանում «Հմուտ ձեռքեր» խորագրով:

3.6 – Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտներին ներկայացնել բնության դերն ու կարևորությունը մարդու կյանքում: Նպաստել էկոլոգիական աղետների, վտանգների և դրանց կանխարգելման անհրաժեշտությունը գիտակցելուն:

3.7 - Դպրոց-ընտանիք կապը

Աշակերտների ուսումնական առաջադիմությունը ամուր հիմքերի վրա դնելու համար նպաստել դպրոց- ընտանիք կապի ամրապնդմանը: Ամուր կապեր ստեղծել ծնողների հետ, այցելել երեխաներ ընտանիքներ, ծանոթանալ նրանց ապրելակերպին, ընտանեկան փոխհարաբերություններին:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուս. Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
I	Գիտելիքի և դպրության օր	01.09.2023	Դասվար
II	Զրույց՝ ''Ով եմ ես''	08.09.2023	Դասվար, աշակերտներ
III	Իմ անկախ Հայաստան: ՀՀ պետական խորհրդանիշները	15.09.2023	Դասվար,աշակերտներ
IV	Զրույցի և խրախուսանքի միջոցով երեխաների մեջ դաստիարակել ինքնուրույնություն և պատասխանատվություն, անցկացնել զրույց ''Մեկը բոլորի համար, բոլորը մեկի'' թեմայով	22.09.2023	Դասվար, աշակերտներ
V	Քո առողջությունը. անձնական հիգիենա, օրվա ռեժիմ	29.09.2023	Աշակերտներ
VI	Զրույց'' Դասագիրքն ու մենք''	06.10.2023	Դասվար,աշակերտներ, ծնողներ
VII	Սենյակային բույսերի աճեցում	13.10.2023	Դասվար, աշակերտներ
VIII	Պաստառների ձևավորում՝ հերթապահություն, դասացուցակ	03.11.2023	Դասվար,աշակերտներ
IX	Ծանոթացնել ճանապարհային երթևեկության նշանների հետ	10.11.2023	Դասվար, աշակերտներ
X	Զրույց'' Մաքուր պահել մեր շրջապատը''	17.11.2023	Դասվար, աշակերտներ
XI	Մենք ընկերներ ենք:	24.11.2023	Դասվար, աշակերտներ
XII	Զրույց'' Հարգել ուրիշի աշխատանքը''	01.12.2023	Դասվար,աշակերտներ
XIII	Դասասենյակի զարդարում: Զրույց '' Ձմեռ պապիկի մասին''	08.12.2023	Դասվար,աշակերտներ,ծնողներ
XIV	Ձմեռ պապիկի արհեստանոցում	15.12.2023	Դասվար,աշակերտներ
XV	Ամանորյա հանդես	22.12.2023	Դասվար,աշակերտներ
XVI	Հնթերցել Աստվածաշնչից հատվածներ: Տերունական աղոթքի ուսուցում	26.01.2024	Դասվար,աշակերտներ
XVII	Զրույց՝ Երբ տանը մենակ ես''	02.02.2024	Դասվար,աշակերտներ, ծնողներ
XVIII	Զրույց'' Խնայել հացը, ջուրը, էլէկտրաէներգիան''	09.02.2024	Դասվար, աշակերտներ
XIX	Գիրք նվիրելու օր	16.02.2024	Դասվար, աշակերտներ
XX	''Սասնա ծռեր'' մուլտֆիլմի դիտում	23.02.2024	Աշակերտներ

XXI	Մնակական երգերի ուսկնդրում	01.03.2024	Դասվար, աշակերտներ
XXII	''Երջանիկ մանկություն'' պատասի ձևավորում	15.03.2024	Դասվար, աշակերտներ
XXIII	Զրույց'' Առողջ մարմին''	05.04.2024	Դասվար,աշակերտներ
XXIV	Զրույց'' Հույզերն ու խոսքը''	12.04.2024	Դասվար, աշակերտներ
XXV	Ծանոթացնել ''Սուրբ Զատիկ'' ծիսակարգին	19.04.2024	Դասվար, աշակերտներ
XXVI	Զբոսանք մոտակա զբոսայգում	26.04.2024	Դասվար, աշակերտներ, ծնողներ
XXVII	Ուսկնդրել '' Երաժշտական այբուբենը''	03.05.2024	Դասվար, աշակերտներ
XXVIII	Մրգերի համադրությամբ ստեղծել զատիկ, թիթեռ	10.05.2024	Դասվար, աշակերտներ
XXIX	''Արդեն գրաճանաչ եմ'' միջոցառում	17.05.2024	Դասվար, աշակերտներ, ծնողներ
XXX	Էքսկուրսիա Օշականում	24.05.2024	Դասվար,աշակերտներ, ծնողներ

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը
01.09.2023	Գիտելիքի օր	Դպրոցի բակ